ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Ք. Գյումրի **12.03.2019**

Սույն փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) կնքվում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (հետայսու՝ ԵՆԿ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանի, մի կողմից, և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (հետայսու՝ ՇՊՀ) հետ, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, մյուս կողմից (կազմակերպությունները միասին, հետայսու՝ Կողմեր), հաստատում են իրենց մտադրությունը ներքոնշյալ հարցերում՝

Նկատի ունենալով այն, որ երկու կողմերը ընդունում են յուրաքանչյուր կողմի անկախությունը և կնքում են սույն հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և փոխադարձ պատասխանատվության ոգով,

հաշվի առնելով այն, որ սույն հուշագիրը հանդիսանում է երկկողմանի գործողությունների սահմանում, որի շուրջ կողմերը պատրաստակամություն են հայտնում համագործակցելու,

նկատի ունենալով այն, որ սույն հուշագիրը չի սահմանափակում յուրաքանչյուր կազմակերպության իրավունքը անկախ աշխատել մարդասիրական և զարգացման ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների հետ:

այսուհետ՝ Կողմերը համաձայնում են համագործակցել համաձայն հետևյալի.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն հուշագիրը կնքվում է Կողմերի միջև համագործակցություն ստեղծելու նպատակով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐԸ

2.1 Կողմերը համաձայնվում են.

2.1.1 Փոխադարձ աջակցություն ցուցաբերել միմյանց գործունեություններում:

2.1.2 Գտնել ճկուն և փոխադարձ ընդունելի լուծումներ այն իրավիճակների համար, որոնք դուրս են կողմերից յուրաքանչյուրի վերահսկողությունից և որոնք կարող են ներազդել համագործակցության վրա (օրինակ՝ սոցիալական/քաղաքական միջադեպ, բնական աղետ և այլն):

2.1.3 Պարբերաբար վերանայել իրենց համագործակցությունը և շարունակաբար ուղիներ գտնել այն ամրապնդելու ու հզորացնելու համար:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն հուշագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2 Հուշագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրերով և ստորագրվում Կողմերի կողմից: Լրացուցիչ համաձայնագրերն ուժի մեջ են մտնում Կողմերից կողմից վերջինի ստորագրելու պահից, եթե այդ լրացուցիչ համաձայնագրում ուժի մեջ մտնելու այլ ժամկետ սահմանված չէ:

5.3 Սույն հուշագիրը կազմվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Իրավաբանական հասցե՝ ք. Գյումրի, Հովսեփյան 5/1
Գործունեության հասցե՝ ք. Գյումրի, Շահումյան 69
ՀՎՀՀ 05536501
ՀԿ նախագահ՝

Արթուր Նաջարյան
Անուն/Ազգանուն

Ստորագրություն

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Գյումրի, Պ. Սևակ 4
Ռեկտորի ժՊ՝

Երվանդ Սերոբյան
Անուն/Ազգանուն

Ստորագրություն